

Ժողովրդավարության եվրոպական մայրաքաղաք. Դիմեք և դարձրեք ձեր քաղաքը ժողովրդավարության դեսպան:

Իսկ եթե դեմոկրատիան տուն ունենա՞ր: Տեսանելի վայր, որտեղ քաղաքացիները համախմբվում են՝ կիսելու փորձը, սովորելու և վայելելու ժողովրդավարական արժեքները ազատության և խաղաղության դրոշի ներքո:

Մա իսկապես [«Ժողովրդավարության եվրոպական մայրաքաղաք»](#) բոլորովին նոր նախագծի տեսլականն է. նախաձեռնություն, որն ամեն տարի, սկսած 2022 թվականից, կնշանակի **Եվրոպայում ժողովրդավարությունը ներկայացնող և ամրապնդող քաղաք:**

Լիովին աջակցելով այս նախաձեռնությանը և համոզված դրա հավելյալ արժեքին՝ զարգացնելու ժողովրդավարություն, խթանելու սոցիալական և քաղաքական նորարարությունները և փոխանակումները,՝ ALDA-ն հպարտ է հայտարարել, որ իր **գլխավոր քարտուղար Անտոնյա Վալմորբիդան նշանակվել է Փորձագետների ժյուրիի անդամ:** Այսպիսով, նա կլինի այն սակավաթիվ փորձագետներից և պրակտիկ մասնագետներից, որոնք կուսումնասիրեն բոլոր հայտերը և կընտրեն 5 առաջադրված քաղաքները, որոնց օգտին կքվեարկեն եվրոպացի քաղաքացիները:

Փաստորեն, Եվրոպայի խորհրդի անդամ երկրների բոլոր քաղաքները (100,000+ բնակչությամբ) կարող են դիմել Ժողովրդավարության առաջին եվրոպական մայրաքաղաք ընտրվելու համար: Հաղթող քաղաքին հնարավորություն կընձեռվի իրականացնել հետաքրքիր միջոցառումների, փառատոների մեկամյա ծրագիր, որոնք ուղղված են ժողովրդավարության բարելավմանը և ամրապնդմանը, որի հիմքում քաղաքացիների մասնակցությունն է:

Իր առաքելության և փորձառության լույսի ներքո՝ ALDA-ն հպարտ է, որ փորձագետների ժյուրիի մաս է կազմում և ընտրում է 5 քաղաք:

Ո՞ՐՆ Է ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆ ՀԱՂԹՈՂ ՔԱՂԱՔԻ ՀԱՄԱՐ:

- Շատ տեսանելի է որպես եվրոպական ժողովրդավարական լավագույն փորձի փարոս
- Քաղաքացիներն ակտիվորեն կզարգացնեն ժողովրդավարական քաղաքականության նոր ձևեր
- Ոգեշնչել քաղաքական գործիչներին և նորարարներին ամբողջ Եվրոպայից՝ փոփոխություններ առաջացնել քաղաքի նոր գաղափարների, գործունեության և ցանցերի միջոցով:

ԻՆՉՊԵՍ Է ՔԱՂԱՔԸ ԴԱՌՆՈՒՄ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԱՅՐԱՔԱՂԱՔ.

- Քաղաքները դիմում են կոչման համար՝ ներկայացնելով իրենց լավագույն ժողովրդավարական փորձի պորտֆելը և նոր նախագծերի գաղափարները
- Փորձագետների ժյուրին գնահատում է նախագծերը և որոշում է երեքից հինգ քաղաքների կարճ ցուցակը
- 10,000 եվրոպացի քաղաքացիներից բաղկացած ժյուրին քվեարկում է քաղաքը ժողովրդավարության եվրոպական մայրաքաղաք դառնալու օգտին

Լրացուցիչ մանրամասները կարող եք գտնել Ժողովրդավարության եվրոպական մայրաքաղաքի (ECoD) փաստաթղթում և ստորև բերված օժանդակ տեղեկատվությունում.

- [ECoD Call](#)
- [ECoD Flyer](#)
- [ECoD NPO Factsheet](#)